ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա այսպիսի մարդիկ էին հին օրերուն մեծաւոր հայերը։ Եւ սոնց հետ էր Պատրիարքներուն, եպեսխ-ներուն, պէյերուն, վարդապետներուն, վանապետնե-բուն, վարպետներուն, վարժապետներուն, փիլիսոփա-ներուն, աւագերէցներուն և կաթողիկոսներուն իսկ։ բուն զործն ու հապուկ յարաբերութիւնները. միջին-դարեան ու զրաբառեան մարդիկ, ինչպէս ոճ է ըսել, մեծ մասովն ալ՝ առանց հասկընալու և միջին դարն և զրաբառն և աշխարհաբառը, հասկընալով միայն և միայն այն աշխարհն ու զրը, որուն մէջ կապրէին, և միայն այն լեզուն, որ զրամ ու հանգիստ և ազդե-ցութիւն կը բերէր։ Այդ զրամէն ու ազդեցութենէն արձանակն և քերականական բաժին մը ալ եղած է ժամանակին զպրոցներուն և վարժապետներուն հետ՝ անցեալ Մխիթարեաններուն ալ[2], իսկ հանգիստէն, մեծկակ բաժին մը ինկած է իրենց որդիներուն և թոռ-ներուն այն մասին, որ աշխատելէն աւելի սիրած են

1. Ուզողը կրնայ կարդալ Գաբրիէլ Պատկա-նեանի կենսագրութեան և Մսեր Մսերեանցի կա-թողիկոսներու պատմութեան մէջ՝ Դանիէլի և Դա-ւիթի կաթողիկոսութեան ատեն և առաջներն ալ՝ Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսին՝ վարդա-պետ եղած միջոցին Պոլիսի և Զմիւռնայի մէջ վա-րած հնարագիտութիւնները, զորս աւանդութիւնն ալ աւելի պտոյտաւոր կը պատմէ։

2. Ի լսողաց (?) ենք՝ թէ Ղազէզ Արթին ամիրան, միայն 1836–1837ի հայերէն մեծ բառգիրքին տպա-գրական ծախքին ի նպաստ լեցուցած կամ հոսե-ցուցած է հանդրին վանական ծոցը (ղենետիկի վանքը) 1000ի (?!) չափ ոսկի։